2005 Թ. ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ՀՌՈՄՈՒՄ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐԻ ԿՈՆԿԼԱՎԸ ԿԱՐԴԻՆԱԼ ՅՈԶԵՖ ՌԱՅԻՆԳԵՐԻՆ ԸՆՏՐԵՑ ՀՌՈՄԻ 265-ՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Ապրիլի 23-ին Վատիկան մեկնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը՝ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության մասնակցելու Հռոմի Քահանայապետ և Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ նորընտիր Պապի գահակալության արարողությանը, որը տեղի ունեցավ ապրիլի 24-ին: Պատվիրակության կազմում էին Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանը և Տ. Տրդատ քհն. Ուզունյանը՝ որպես Պատրիարքի գավազանակիր:

«Հովհաննես Պողոս Մեծ Պապից հետո Կարդինալներն ընտրեցին ինձ՝ Տիրոջ այգու համեստ ու խոնարհ ծառայիս: Ես մխիթարվում եմ այն իրողությամբ, որ Աստված կարող է գործել տկար «գործիքներով», և ես նախևառաջ ապավինում եմ ձեր աղոթքներին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակությունը, գլխավորությամբ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի, ապրիլի 24-ին մասնակցեց Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ Պապի գահակալության արարողությանը և Կաթոլիկ Եկեղեցու նորընտիր հովվապետի մատուցած Ս. Պատարագին:

Հաջորդ օրը, ապրիլի 25-ին, քույր Եկեղեցիների պատվիրակությունների ընդունելության ժամանակ, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացրեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանը, քանի որ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը մեկնել էր Երուսաղեմ՝ մասնակցելու Զատկական արարողություններին, որոնք Երուսաղեմում կատարվում են հին տոմարով: Սրբազան Հայրը նորընտիր գահակալին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները: Բենեդիկտ ԺԶ Պապը շնորհակալություն հայտնեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակության մասնակցության ու աղոթակցության համար, իր եղբայրական ջերմ ողջույնները փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետին: Նորին Սրբությունը հանդիպման ժամանակ նաև նշեց, որ հիշել է Ապրիլի 24-ի մասին և աղոթել Հայոց ցեղասպանության զոհերի հոգիների համար:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊԸ